


2664



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«07» 03 2025 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 05 8 - 2 5

Նախաձեռնող՝

«ԷՅԷՄՋԻ ՊՐՈՋԵԿՏ» ՍՊԸ
Քաղաք Երևան, Ազատության փ. 2. 1 բն. 12

Գործունեությունը՝

Գորիս համայնքի Վերիշեն բնակավայրի միջնակարգ
դպրոցի կառուցում
Սյունիքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 058 - 25

«07» Ճարտար 2025թ.

Սյունիքի մարզի Գորիս համայնքի Վերիշեն բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԷՅԷՄՋԻ ՊՐՈՋԵԿՏ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության կատեգորիա՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Սյունիքի մարզ, Գորիս համայնք, Վերիշեն բնակավայր

Ներածական մաս. «ԷՅԷՄՋԻ ՊՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնահատման հաշվետվությամբ նախատեսվում է Սյունիքի մարզի Գորիս համայնքի Վերիշեն բնակավայրում 432 աշակերտի համար միջնակարգ դպրոցի կառուցում:

Գործունեությունն իրականացվելու է Գորիսի համայնքապետարանի կողմից տրամադրված 2025թ. փետրվարի 27-ի N08 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 2.07998 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է քաղաքաշինության կոմիտեի և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ Կառուցապատման ենթական հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 2.07998 հա: Հողատարձքը ծանրաբեռնված է հին դպրոցի /5951.1քմ/ և կաթսայատան /14.1քմ/ շենքերով, որոնք նախատեսվում է ապամոնտաժել:

Կառուցապատման ենթակա տարածքի հարևանությամբ են գտնվում մեկ կամ երկու հարկանի բնակելի տներ: Նախատեսվող դպրոցի մասնաշենքի հեռավորությունը՝ կարմիր գծից՝ 50-60 մ, հարևան հողակտորներից, շենք-շինություններից՝ 25-30 մ, ճանապարհից՝ 40-50մ: Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Գորիսից անմիջապես հյուսիս-արևմուտք, Վարարակ գետի ափին, ծովի մակերևույթից՝ 1540-1620 մ բարձրության վրա:



Գեոմորֆոլոգիական տեսակետից շրջանն իրենից ներկայացնում է միջին բարձրության լեռնային գոտի, որին բնորոշ է լավաներով ծածկված սարավանդներ: Ռելիեֆին բնորոշ են մակերևույթի խիստ կտրտվածությունը, ինչպես նաև ֆիզիկական ակտիվ հողմահարությունը:

Տարածքի կլիման բարեխառն լեռնային է՝ մեղմ ձյունապատ ձմեռներով, տաք ամառներով: Տարեկան միջին ջերմաստիճանը 9.2°C է, օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը՝ 35.4°C , բացարձակ նվազագույնը՝ -20.4°C , օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը՝ 71%:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- ընդհանուր հողատարածքի մակերեսը՝ 2.07998 քմ,
- կառուցապատման մակերեսը՝ 3476.3 քմ,
- դպրոցի մակերեսը 0.000 նիշում՝ 3253.7 քմ,
- կանաչապատման գոտու մակերեսը՝ 9937.2 քմ,
- կրթահամալիրի առավելագույն բարձրությունը՝ 11.330 մ:

Նախագծով նախատեսվում է կառուցել դպրոց, կաթսայատուն, իրականացվելու է տարածքի բարեկարգում, կանաչապատում, խաղադաշտի և սպորտ հրապարակի կառուցում, շվաքարանի կառուցում, ինչպես նաև առկա է միջոցառումների համար նախատեսված տարածք: Նախատեսված է ավտոկայանատեղի 10 մեքենայի համար:

Համաձայն նախագծային լուծումների՝ նոր դպրոցը նախատեսված է 432 աշակերտի համար: Դպրոցը նախատեսվում է իրականացնել երկհարկանի՝ մեկ նկուղային հարկով, որը ծառայելու է նաև որպես ժամանակավոր թաքստոց:

Դպրոցն ունի 36.6 մ x 91.5 մ առանցքային չափեր և սեյսմիկ կարով բաժանված է 2 հավասար մասնաշենքերի: Միջնորմները նախատեսված են $200 \times 400 \times 200$ թեթև բետոնի բլոկներից, համապատասխան ամրանավորմամբ:

Առաջին հարկի բարձրությունը հատակից հատակ կազմում է 3.3 մ: Երկրորդ հարկի բարձրությունը փոփոխական է՝ ստորին մասում կազմում է 3.0 մ ծածկի տակ: Սպորտային դահլիճի բարձրությունը հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշը կազմում է 7.8 մ, իսկ հանդիսությունների դահլիճի բարձրությունը հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ, կազմում է՝ 4.5 մ: Տանիքների թեքությունը, կազմում է 7 աստիճան, երկշերտ ջրամեկուսիչով, վերին շերտը պաշտպանիչ մանրավազով գույնը մուգ մոխրագույն:

Նախատեսվող խաղադաշտը՝ 40×20 մ չափերով, իր հարակից տարածքով նախատեսվում է հարդարել արհեստական խոտածածկով՝ 1146 քմ մակերեսով: Խաղադաշտին կից նախատեսված են նստարաններ՝ 125 հանդիսատեսի համար:

Խաղադաշտի հարակից տարածքում նախատեսված է սպորտ հրապարակ, որի հարդարումը իրականացվելու է ռետինե հատակով՝ 1322քմ մակերեսով:

Տարածքը պարսպապատվելու է, նախատեսվում է երկու մուտք, մեկը հիմնական ճակատի կողմից, մյուսը նրանից վեր դեպի հյուսիս արևմուտք:

Դպրոցի շենքը տեղակապված է հողամասի դեպի գլխավոր (հարավ-արևմտյան) փողոց ուղղված ճակատից 21 մ ետ նահանջով, դեպի հյուսիս-արևելյան փողոց 20 մ ետ նահանջով:

Դպրոցի տարածքում պահպանված են հակահրդեհային միջոցառումների համար անհրաժեշտ պայմանները: Ապահովված է հրշեջ մեքենաների մոտեցման համար անհրաժեշտ ճանապարհները:

Դպրոցի բակային տարածքի բարեկարգման աշխատանքների շրջանակում նախատեսվում է բաց մարզադաշտ, բաց մարզադահլիճ, վազքուղի, ճանապարհներ և հարթակներ:

Դպրոցի տանիքի հարավ նախա կողմում նախատեսվում է տեղադրել 127.6 կՎտ դրվածքային հզորությամբ արևային մարտկոցներ՝ 19⁰ հորիզոնական թեքությամբ: Արևային



Ֆոտովիզուալային համակարգը կազմված է 232 հատ միաբյուրեղային 144 (6x24) կես բջիջներով, 550 Վտ պիկային հզորությամբ:

Կրթահամալիրի կառուցման համար իրականացվել են ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության համակարգերի ինժեներական լուծումները, որոնք իրականացվելու են ՀՀ շինարարական նորմերի համաձայն:

Դպրոցի համար նախատեսվում է նոր կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանի տեղադրում:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար, դպրոցում ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

Քանդման աշխատանքներով նախատեսվում է՝

- ներքին քանդման աշխատանքների ժամանակ տեսակավորել բոլոր վերադարձվող նյութերը,

- միաձույլ երկաթբետոն B20 դասի բետոնի քանդումն իրականացվելու է թոթոամուրճով,

- քանդման աշխատանքներին զուգահեռ կազմակերպվելու է շինարարական աղբի կանոնավոր տեղափոխում, իսկ մինչև տեղափոխումն այն պահվելու է կառուցապատման տարածքում՝ ծածկված անթափանց թաղանթներով կամ փակ տարաների (կոնտեյներներ, պարկեր և այլն) մեջ:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ շինարարական աշխատանքները տևելու են 25 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ աշտարակային կոունկ, բետոնատար մեքենա, եռակցման ագրեգատ, բուլդոզեր, շարժական կոմպրեսոր, տոփանիչ, էքսկավատոր, ավտոբետոնատար և այլն:

Ապամոնտաժման աշխատանքները կատարվելու են ձեռքով, բահերով և տեխնիկայով՝ մի քանի փուլերով: Քանդման արդյունքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ՝ մոտ 11000 տ շինաղբի տեսքով, փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող՝ 10337 մ³ քանակով՝ ինչը հեռացվելու է համայնքապետարանի կողմից հատկացված տարածք, ինչպես նաև շինարարական տարբեր նյութեր՝ փայտ, պատուհաններ, մետաղական մասեր, քար և այլն: Քանդման արդյունքում առաջացող թափոնները տարանջատվելու և կուտակվելու են առանձին: Օգտագործման համար պիտանի թափոնները հանձնվելու են բնակչության անպահով խավերին, իսկ մնացածը՝ տեսակավորվելու են, հանձնվելու են համապատասխան մասնագիտական կազմակերպություններին կամ տեղափոխվելու են աղբավայր:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա: Շինարարական նյութերից օգտագործվելու են բետոն, քար, ամրան, ավազ, ապակի, ջերմամեկուսիչ նյութեր և այլն: Առաքումն իրականացվելու է պարբերականությամբ, որը կապահովի աշխատանքների անընդհատությունը:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ժամանակ բնակավայրից օգտագործվելու է ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող անաղբ ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար խմելու և կենցաղային ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ



սպասարկող աշխատողների թվաքանակի (134 մարդ), ինչը կազմում է 2159.95 մ³/շին. ժամ. կամ 3.3 մ³/օր: 20000 մ² ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 10500 մ³/շին. ժամ. կամ 30 մ³/օր: Ընդհանուր ջրօգտագործումը ամբողջ ժամանակահատվածի համար կազմում է՝ 13569.95 մ³/շին. ժամ:

Շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը և այլն, կազմակերպվելու են բացառապես շինարարության տարածքի սահմաններում:

Կրթահամալիրի կառուցումը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 16050 մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որից ետլիցքը կազմելու է 5713 մ³: Ավելացած հողային հանույթը՝ 10337մ³ կտեղափոխվի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Կենցաղային աղբը, որի ընդհանուր քանակը գործունեության ողջ ընթացքում կանխատեսվում է մոտ 60 մ³ ամբողջ տարվա համար, կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ: 9649 քմ մակերեսով տարածքում տնկվելու են նոր ծառեր՝ 90 հատ, որից եղևնի՝ 49 հատ, տուա՝ 41 հատ, ինչպես նաև թփեր, տարածքում առկա 18 ծառերը պահպանվելու են:

Կանաչապատման համար անհրաժեշտ բուսահողի ծավալը կկազմի մոտ 3000մ³, որի ձեռք բերումն իրականացվելու է ՀՀ-ում գործող օրենսդրությամբ:

Վերիշեն բնակավայրի տարածքում ըստ համայնքի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի բացակայում է ոռոգման ջրի համակարգ: Նախագծով նախատեսվում է դպրոցի ետնամասում տեղադրել պոլիմերային բաք 5000 և տարողությամբ՝ ոռոգման ջրի պահպանման համար: Նախատեսվում է բաքը լցնել ջրով և տարածքը ջրել ըստ անհրաժեշտության՝ ոռոգման ջրի բացակայության դեպքում:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Ինչը ներառում է՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում,
- աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ,
- սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրության թաղանթով,



- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում փակ ծածկով մեքենաներով,

- հեղուկ նյութերի պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց տեխնիկական նորմալ վիճակի շահագործման ապահովում,

- շինհրապարակում քանդման և շինարարության ընթացքում թափոնների տարանջատում,

- տնկված ծառերի և խոտածածկի խնամք,

- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների պահպանում և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան հատկացնել 350 ՀՀ հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 700 ՀՀ հազ. դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Վերիշեն բնակավայրի միջնակարգ դպրոցը կառուցվելու և շահագործվելու է գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Սյունիքի մարզպետարանը, Գորիսի համայնքապետարանը, շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննական գործընթացում կատարվել է հաշվետվության լրամշակում, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության ընթացքում Սյունիքի մարզի Գորիս համայնքի Վերիշեն բնակավայրում իրականացվել են հանրային լսումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում լանջափտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ակնկալվում են ուսումնական և աշխատանքային պայմանների բարելավում, դպրոցի հարակից տարածքի բարեկարգում՝ խթանելով նաև առողջ ապրելակերպի զարգացմանը՝ ի հաշիվ բարեկարգ և ժամանակակից բացօթյա մարզահրապարակների, բարեկարգված և կանաչապատված տարածքի կայուն օգտագործում և պահպանություն:

Նախատեսվող գործունեությունը նախաժողովում կտա դպրոցի ուսուցիչներին և աշակերտներին իրենց աշխատանքային ու հանրային գործընթացները կազմակերպել և անցկացնել առավել անվտանգ, բարեկարգ և հանրի միջավայրում:



Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը: Ինչպես նաև պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:

- Քանի որ կառուցապատան աշխատանքներն իրականացվելու են գործող դպրոցի տարածքում, խստագույնս հետևել անվտանգության կանոններին և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ դպրոցականների մուտքը շինհրապարակ բացառելու նպատակով:

- Նախատեսվող շինարարական աշխատանքները կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Գորիսի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ԷՅԷՄՋԻ ՊՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Գորիս համայնքի Վերիշեն բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Արմինե Վարդանյան